ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2.2

ԲԷՑ-ԲՐԱՇՁԲ-17/34 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**/Արտահերթ նիստ գնահատող հանձնաժողովի նիստի**

**թիվ 2.1 արձանագրությունում լրացումներ կատարելու/**

*ք. Երևան* *10.09.2017թ.*

*ժամը 11:30*

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

Հարություն Գևորգյան - Մատակարարման բաժնի պետ

**Անդամներ՝ ԳՊ/ԳԱ- գնահատող անձնակազմ**

Վահե Յուզբաշյան -«Նախագիծ» մասնաճյուղի տնօրեն

Գագիկ Գրիգորյան - «Հարավային» մասնաճյուղի տնօրեն տեղակալ

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Ռոմեն Ալբերտյան - Մատակարարման բաժնի պետի տեղակալ

*I. «ԱՌՎԱ ԵՐԿԻՐ» և «Նամենասեղ» ՍՊԸ-ների պիտանելիության չափորոշիչի վերագնահատման մասին*

---

(Հ. Գևորգյան)

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց և որոշեց.

1. «ԱՌՎԱ ԵՐԿԻՐ» և «Նամենասեղ» ՍՊԸ-ների հայտի ապահովման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված են իրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, մասնավորապես «Նամենասեղ» ՍՊԸ-ի հայտի ապահովումը ներկայացրել է տուժանք համաձայնագրի ձևով, իսկ «ԱՌՎԱ ԵՐԿԻՐ» ՍՊԸ-ն՝ վարկային գիծ տրամադրելու տեղեկանքի ձևով այն դեպքում, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն մասնակիցը հայտի ապահովումը պետք է ներկայացնի բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, եթե տվյալ գնման ընթացակարգի նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը:
2. Հաշվի առնելով արձանագրության 1-ին կետով նշված հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ 1-ին կետով՝ «ԱՌՎԱ ԵՐԿԻՐ» և «Նամենասեղ» ՍՊԸ-ների հայտը գնահատել անբավարար և մերժել:

*II. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին*

---

(Հ. Գևորգյան)

1. Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության ստացման օրվանից հաշված հաջորդ աշխատանքային օրը ժամը 12:00-ին :

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Հարություն Գևորգյան Վահե Յուզբաշյան

Գագիկ Գրիգորյան Ռոմեն Ալբերտյան